**Հավելված 3**
**<<ԴԱԼՄԱՆԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-14>> ծածկագրով**
**ընթացակարգի հրավերի**

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

# ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ

# ԴԱԼՄԱՆԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-14

**գ. ______________** **«__» «__________» 2014թ.**

<<________________>> ՀՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն ____________________յան, որը գործում է <<--------------------------->> ՀՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «______________________» _____-ն, ի դեմս տնօրեն ____________յանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին (այսուհետ՝ Ստացող) հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթեք /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից,

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը,

բ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը,

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը,

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմամգիրը,

3.1.4.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) հանձնվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները,

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին,

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը,

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը,

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները,

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին,

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում,

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք,

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր,

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը,

3.4.5 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը,

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը,

3.4.7 Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները,

3.4.8 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ ___________ **(______________________)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է Պայմնագրի N 2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

**5. Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանգրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ մինչև Ապրանքի հանձնման ամսվան հաջորդող ամսվա երկրորդ աշխատանքային օրը գնորդին է ներկայացնում հանձնած ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունները ստորագրվում են, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ Պյմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով և դրա հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր:

9.3 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանգիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները որոշվում և դրանց փոփոխությունը գնահատվում է՝ հետևյալ կերպ. ____________________________________________________________________________________

____________________________________________________________________________________

____________________________________________________________________________________

<u>Կարգը սահմանվում է Պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ:</u>

Պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Պայմանագիրը կազմված է .... էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները՝ բաղկացած …./…../ թերթից հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

9.8 Պայմնագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ________________________________ | ________________________________ |
| _______________________ | _______________________ |
| __________________________ | __________________________ |
| _____________________________ | _____________________________ |
| __________________________ | __________________________ |
| --------------------------___ ___________ | --------------------------___ ___________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 1

<<__>> <<____________>> 2014 թ.-ի կնքված

ԴԱԼՄԱՆԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-14 ծածկագրով

գնման պայմանագրի

# ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չափ. Համար | Չափաբաժնի անվանումը | Տեխնիկական բնութգիր | Չափ. Միա-վոր | Քա-նակ | Մատա-կարար-ման հաճա-խություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ալյուր | 1-ին տեսակի, փայլուն սպիտակ գույնի, առանց ավելորդ խառնուրդների և հոտի, փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 100 | ամսեկան |
| 2 | Աղ | Էքստրա տեսակի յոդացված, յոդի զանգվածային մասը՝ 50±10 մգ/կգ: Փաթեթավորումը՝ 1կգ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 27 | ամսեկան |
| 3 | Բազուկ | Սովորական տեսակի, առանց արտաքին վնասվածքների, վաղահաս, միջին երկարությունը 5-7 սմ, լայնքը՝ 10-12 սմ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 50 | շաբաթական |
| 4 | Բրինձ | Սովորական, երկար տեսակի, չկոտրած, փաթեթավորումը գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 40 | ամսեկան |
| 5 | Գազար | Սովորական տեսակի, առանց արտաքին վնասվածքների, վաղահաս, միջին երկարությունը 10-15 սմ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 70 | շաբաթական |
| 6 | Դեղձ | Թարմ, սեղանի: Առանց վնասվածքների, թարմ և ախորժելի տեսքով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 50 | շաբաթական |
| 7 | Թեյ | Սև թեյ, փաթեթներով, գործարանային 100գ. փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | տուփ | 10 | ամսեկան |
| 8 | Թթվասեր | 65-100 Т: 0,2 կգ տարաներում: Գործարանային արտադրությամբ և փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | տուփ | 100 | Երկու օրը մեկ անգամ |
| 9 | Թխվածքաբլիթ (Պեչենի) | պարունակությունը՝ 20%-ից մինչև 27%, յուղայնությունը՝ 3%-ից մինչև 30%,: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 55 | շաբաթական |
| 10 | Լոլիկ | Թարմ, առանց վնասվածքների և տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 120 | շաբաթական |
| 11 | Խաղող | Թարմ, սեղանի: Առանց վնասվածքների, թարմ և ախորժելի տեսքով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 50 | շաբաթական |
| 12 | Խնձոր | Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս: Առանց վնասվածքների, թարմ և ախորժելի տեսքով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 50 | շաբաթական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | Կաթ | Թարմ կովի կաթ 3.2 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-21 °T, 1 լ տուփերում: Գործարանային փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | լիտր | 1200 | Երկու օրը մեկ անգամ |
| 14 | Կաթնաշոռ | Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20%-ից ոչ պակաս, թթվայնությունը՝65-100 T: 0,2 կգ տուփերում: Գործարանային արտադրությամբ և փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | տուփ | 100 | Երկու օրը մեկ անգամ |
| 15 | Կակաո | pH-ը[a] 7,1-ից ոչ ավելի, դիսպերսությունը՝ 90,0 %-ից ոչ պակաս: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 1 | ամսեկան |
| 16 | Կաղամբ | Գլուխ կաղամբ, առանց արտաքին վնասվածքների, չցրտահարված, սովորական տեսակների: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 300 | շաբաթական |
| 17 | Կանաչի | Թարմ, տարբեր տեսակների համադրում (խառը), առանց արտաքին վնասվածքների: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | հատ | 50 | օրեկան |
| 18 | Կարագ | Ռուսական կամ համարժեքը, Սերուցքային, 71.5-82.5% յուղայնությամբ, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գր, ածխաջուր 0,7գր, ԳՕՍՏ 37-91, 740 կկալ, գործարանային փաթեթներով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 105 | օրեկան |
| 19 | Կարտոֆիլ | I տեսակի, չցրտահարված, առանց արտաքին վնասվածքների, փաթեթավորումը՝ կտորի, ցանցի և պոլիմերային պարկերով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 300 | շաբաթական |
| 20 | Կարտոֆիլ նոր | I տեսակի, չցրտահարված, առանց արտաքին վնասվածքների, փաթեթավորումը՝ կտորի, ցանցի և պոլիմերային պարկերով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 500 | շաբաթական |
| 21 | Կոնֆետ | Կարամել: Թարմ, մրգային, տեղական արտադրության՝ նաբաթով և միջուկով, խոնավությունը՝ 3.0% ից ոչ ավելի, թթվայնությունը՝ -3-26: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 25 | շաբաթական |
| 22 | Հավ | Առանց սառեցրած վիճակի, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 200 | շաբաթական |
| 23 | Հաց | Հրազդան տեսակի, միջին չափի: Ցորենի ալյուրից թողարկված հատով, պատրաստված բարձր առաջին ալյուրից: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 530 | օրեկան |
| 24 | Հնդկաձավար | Սովորական տեսակի, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 % ոչ պակաս, գործարանային պարկերով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 20 | ամսեկան |
| 25 | Ձավար | Պատրաստված ցորենի ծեծած տեսակից, սպիտակ և թեփահան եղած: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 20 | ամսեկան |
| 26 | Ձեթ | Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված, փաթեթավորումը՝ շշալցված 1լիտր տարրողությունում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | լիտր | 40 | շաբաթական |
| 27 | Ձմերուկ | Թարմ, առանց արտաքին վնասվածքների: Տարբեր տեսակի և չափսերի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 70 | շաբաթական |
| 28 | Ձու | N 2, Ձու սեղանի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, սեղանի ձվի պահման ժամկետը 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | հատ | 2500 | շաբաթական |
| 29 | Մածուն | Թարմ կովի կաթից 3.2 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-21 T, գործարանային փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | լիտր | 500 | Երկու օրը մեկ անգամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 30 | Մակարոն | Մակարոնեղեն (վերմիշել, լապշա, մակարոն ) անդրոժ խմորից, չափածրարված: Փաթեթավորումը գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | տուփ | 80 | ամսեկան |
| 31 | Մաննի | Գործարանային փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 20 | ամսեկան |
| 32 | Շաքարավազ | Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Փաթեթավորումը՝ 2կգ գործարանային:ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 240 | ամսեկան |
| 33 | Ոլոռ | Չորացրած, կեղևած, դեղին գույնի: Փաթեթավորումը գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 20 | ամսեկան |
| 34 | Ոսպ | Մաքուր, չոր՝ խոնավությունը 14 %-ից ոչ ավելի, միջին չորությունը՝ 14,0-17,0 % ոչ ավելի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 10 | ամսեկան |
| 35 | Չամիչ | Գործարանային մշակման, սև, առանց կորիզի, չափածրարված, պահպանված 5 C-ից մինչև 20 C ջերմաստիճանում 70 %-ից ոչ ավելի խոնավության պայմաններում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 12 | ամսեկան |
| 36 | Պանիր | Լոռի տեսակի: Պանիր կովի կաթից, յուղի զանգվածային մասը 50 %-ից ոչ պակաս, աղի զանգվածային մասը 3,5-4,5 %: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 20 | օրեկան |
| 37 | Պանիր | Չանախ տեսակի: Պանիր կովի կաթից, յուղի զանգվածային մասը 50 %-ից ոչ պակաս, աղի զանգվածային մասը 3,5-4,5 %: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 15 | օրեկան |
| 38 | Պղպեղ թարմ | Թարմ, առանց վնասվածքների և տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 50 | շաբաթական |
| 39 | Ջեմ | Տարբեր մրգերից և հատապտուղներից, պաստերացված, բարձր տեսակների, 550 գ տարաներով, գործարանային փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | բնկ | 12 | ամսեկան |
| 40 | Սալոր | Թարմ, սեզանի: Առանց վնասվածքների, թարմ և ախորժելի տեսքով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 50 | շաբաթական |
| 41 | Սալորաչիր | Գործարանային մշակման, սև, չափածրարված, պահպանված 5 C-ից մինչև 20 C ջերմաստիճանում 70 %-ից ոչ ավելի խոնավության պայմաններում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 8 | ամսեկան |
| 42 | Սեխ | Թարմ, առանց արտաքին վնասվածքների: Տարբեր տեսակի և չափսերի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 30 | շաբաթական |
| 43 | Սմբուկ | Թարմ, առանց վնասվածքների և տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 60 | շաբաթական |
| 44 | Սոխ | Ընտիր տեսակի, թարմ, կիսակծու, նեղ մասի տրամագիծը 3սմ-ից ոչ պակաս: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 20 | շաբաթական |
| 45 | Վարունգ | Թարմ, առանց վնասվածքների և տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 120 | շաբաթական |
| 46 | Տանձ | Թարմ, սեզանի: Առանց վնասվածքների, թարմ և ախորժելի տեսքով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | կգ | 50 | շաբաթական |
| 47 | Տավարի միս | Միս տավարի թարմ, առանց ոսկորի մսեղիք, զարգացած մկաններով, պահված 6 ժ-ից ոչ ավելի: Պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, պահված 0-(-40)C ջերմաստիճանի | կգ | 400 | շաբաթական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | պայմաններում, I պարարտության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | | | |
| 48 | Տոմատի մածուկ | Բարձր տեսակի ապակե տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 1 կգ տարողությամբ, ապակե տարաններով, գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան: | բնկ | 10 | ամսեկան |

**Պարտադիր պայման՝ մատակարարումը  վաճառողի կողմից:**

**ԳՆՈՐԴ**

____________________
________________________________
_______________________
__________________________
_____________________________
__________________________

--------------------------___ ___________
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

____________________
________________________________
_______________________
__________________________
_____________________________
__________________________

--------------------------___ ___________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 2

<<__>> <<___________>> 2014 թ.-ի կնքված

ԴԱԼՄԱՆԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-14 ծածկագրով

գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ Հ | Չափաբաժնի անվանումը | Չափ. Միավոր | Միավորի գինը / դրամ/ | Նախատեսվում է գնել 2014թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակ | գին | քանակ | գին | քանակ | գին | քանակ | գին | քանակ | գին |
| 1 | Ալյուր | կգ | | | | 20 | | 80 | | 100 | | 100 | |
| 2 | Աղ | կգ | | | | 6 | | 21 | | 27 | | 27 | |
| 3 | Բազուկ | կգ | | | | | | 25 | | 50 | | 50 | |
| 4 | Բրինձ | կգ | | | | 8 | | 32 | | 40 | | 40 | |
| 5 | Գազար | կգ | | | | | | 35 | | 70 | | 70 | |
| 6 | Դեղձ | կգ | | | | | | 30 | | 50 | | 50 | |
| 7 | Թեյ | տուփ | | | | 2 | | 8 | | 10 | | 10 | |
| 8 | Թթվասեր | տուփ | | | | 20 | | 80 | | 100 | | 100 | |
| 9 | Թխվածքաբլիթ (Պեչենի) | կգ | | | | 11 | | 44 | | 55 | | 55 | |
| 10 | Լոլիկ | կգ | | | | 10 | | 86 | | 120 | | 120 | |
| 11 | Խաղող | կգ | | | | | | 25 | | 50 | | 50 | |
| 12 | Խնձոր | կգ | | | | | | 30 | | 50 | | 50 | |
| 13 | Կաթ | լիտր | | | | 240 | | 960 | | 1200 | | 1200 | |
| 14 | Կաթնաշոռ | տուփ | | | | 20 | | 80 | | 100 | | 100 | |
| 15 | Կակաո | կգ | | | | 0,2 | | 0,8 | | 1 | | 1 | |
| 16 | Կաղամբ | կգ | | | | 60 | | 240 | | 300 | | 300 | |
| 17 | Կանաչի | հատ | | | | 10 | | 40 | | 50 | | 50 | |
| 18 | Կարագ | կգ | | | | 21 | | 84 | | 105 | | 105 | |
| 19 | Կարտոֆիլ | կգ | | | | 60 | | 240 | | 300 | | 300 | |
| 20 | Կարտոֆիլ նոր | կգ | | | | 100 | | 400 | | 500 | | 500 | |
| 21 | Կոնֆետ | կգ | | | | 5 | | 20 | | 25 | | 25 | |
| 22 | Հավ | կգ | | | | 40 | | 160 | | 200 | | 200 | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | Հաց | կգ | | | | 106 | | 424 | | 530 | | 530 | |
| 24 | Հնդկաձավար | կգ | | | | 4 | | 16 | | 20 | | 20 | |
| 25 | Ձավար | կգ | | | | 4 | | 16 | | 20 | | 20 | |
| 26 | Ձեթ | լիտր | | | | 8 | | 32 | | 40 | | 40 | |
| 27 | Ձմերուկ | կգ | | | | | | 40 | | 70 | | 70 | |
| 28 | Ձու | հատ | | | | 500 | | 2000 | | 2500 | | 2500 | |
| 29 | Մածուն | լիտր | | | | 100 | | 400 | | 500 | | 500 | |
| 30 | Մակարոն | տուփ | | | | 16 | | 64 | | 80 | | 80 | |
| 31 | Մաննի | կգ | | | | 4 | | 16 | | 20 | | 20 | |
| 32 | Շաքարավազ | կգ | | | | 48 | | 192 | | 240 | | 240 | |
| 33 | Ոլոռ | կգ | | | | 4 | | 16 | | 20 | | 20 | |
| 34 | Ոսպ | կգ | | | | 2 | | 8 | | 10 | | 10 | |
| 35 | Չամիչ | կգ | | | | 3 | | 9 | | 12 | | 12 | |
| 36 | Պանիր | կգ | | | | 4 | | 16 | | 20 | | 20 | |
| 37 | Պանիր | կգ | | | | 3 | | 12 | | 15 | | 15 | |
| 38 | Պղպեղ թարմ | կգ | | | | 10 | | 40 | | 50 | | 50 | |
| 39 | Ջեմ | բնկ | | | | 3 | | 9 | | 12 | | 12 | |
| 40 | Սալոր | կգ | | | | | | 30 | | 50 | | 50 | |
| 41 | Սալորաչիր | կգ | | | | 2 | | 6 | | 8 | | 8 | |
| 42 | Սեխ | կգ | | | | | | 20 | | 21 | | 21 | |
| 43 | Սմբուկ | կգ | | | | | | 40 | | 60 | | 60 | |
| 44 | Սոխ | կգ | | | | 4 | | 16 | | 20 | | 20 | |
| 45 | Վարունգ | կգ | | | | 20 | | 100 | | 120 | | 120 | |
| 46 | Տանձ | կգ | | | | | | 30 | | 50 | | 50 | |
| 47 | Տավարի միս | կգ | | | | 80 | | 320 | | 400 | | 400 | |
| 48 | Տոմատի մածուկ | բնկ | | | | 2 | | 8 | | 10 | | 10 | |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

____________________

________________________________

_______________________

__________________________

_____________________________

**ՎԱՃԱՌՈՂ**

____________________

________________________________

_______________________

__________________________

_____________________________

______________________________

-------------------------------___ ____________
/ստորագրություն/
Կ.Տ

______________________________

-------------------------------___ ____________
/ստորագրություն/
Կ.Տ

**Հավելված 3**

**<<__>> <<____________>> 2014 թ.-ի կնքված**

**ԴԱԼՄԱՆԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-14 ծածկագրով**

**գնման պայմանագրի**

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| ՀՀ | Չափաբաժնի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար % | Փետրվար % | Մարտ % | Ապրիլ % | Մայիս % | Հունիս % | Հուլիս % | Օգոստոս % | Սեպտեմբեր % | Հոկտեմբեր % | Նոյեմբեր % | Դեկտեմբեր % | Ընդամենը Տարի % |
| 1 | Այյուր | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 2 | Աղ | | | | | | | 22 | 41 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 3 | Բազուկ | | | | | | | | 17 | 34 | 51 | 68 | 100 | 100 |
| 4 | Բրինձ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 5 | Գազար | | | | | | | | 17 | 34 | 51 | 68 | 100 | 100 |
| 6 | Դեղձ | | | | | | | | 20 | 40 | 53 | 66 | 100 | 100 |
| 7 | Թեյ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 8 | Թթվասեր | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 9 | Թխվածքաբլիթ (Պեչենի) | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 10 | Լոլիկ | | | | | | | 8 | 29 | 50 | 59 | 68 | 100 | 100 |
| 11 | Խաղող | | | | | | | | 17 | 34 | 51 | 68 | 100 | 100 |
| 12 | Խնձոր | | | | | | | | 20 | 40 | 53 | 66 | 100 | 100 |
| 13 | Կաթ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 14 | Կաթնաշոռ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 15 | Կակաո | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 16 | Կաղամբ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | Կանաչի | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 18 | Կարագ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 19 | Կարտոֆիլ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 20 | Կարտոֆիլ նոր | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 21 | Կոնֆետ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 22 | Հավ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 23 | Հաց | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 24 | Հնդկաձավար | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 25 | Ձավար | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 26 | Ձեթ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 27 | Ձմերուկ | | | | | | | | 19 | 38 | 52 | 66 | 100 | 100 |
| 28 | Ձու | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 29 | Մածուն | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 30 | Մակարոն | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 31 | Մաննի | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 32 | Շաքարավազ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 33 | Ոլոռ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 34 | Ոսպ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 35 | Չամիչ | | | | | | | 25 | 42 | 59 | 67 | 75 | 100 | 100 |
| 36 | Պանիր | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 37 | Պանիր | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 38 | Պղպեղ թարմ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 39 | Ջեմ | | | | | | | 25 | 42 | 59 | 67 | 75 | 100 | 100 |
| 40 | Սալոր | | | | | | | | 20 | 40 | 53 | 66 | 100 | 100 |
| 41 | Սալորաչիր | | | | | | | 25 | 42 | 59 | 67 | 75 | 100 | 100 |
| 42 | Սեխ | | | | | | | | 32 | 64 | 66 | 68 | 100 | 100 |
| 43 | Սմբուկ | | | | | | | | 22 | 44 | 55 | 66 | 100 | 100 |
| 44 | Սոխ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 45 | Վարունգ | | | | | | | 17 | 39 | 61 | 67 | 73 | 100 | 100 |
| 46 | Տանձ | | | | | | | | 20 | 40 | 53 | 66 | 100 | 100 |
| 47 | Տավարի միս | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |
| 48 | Տոմատի մածուկ | | | | | | | 20 | 40 | 60 | 67 | 74 | 100 | 100 |

**ԳՆՈՐԴ**

_____________________

__________________________________

________________________

___________________________

______________________________

___________________________

-----------------------------___ ___________

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

_____________________

__________________________________

________________________

___________________________

______________________________

___________________________

-----------------------------___ ___________

/ստորագրություն/

Կ.Տ

**Հավելված 4**
**<<__>> <<___________>> 2014 թ.-ի կնքված**
**ԴԱԼՄԱՆԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-14 ծածկագրով**
**գնման պայմանագրի**

| **Վաճառող** | **Գնորդ** |
|---|---|
| _________________________________ | _________________________________ |
| *գտնվելու վայրը*_________________ | *գտնվելու վայրը*_________________ |
| _________________________________ | _________________________________ |
| _________________________________ | _________________________________ |
| ՀՎՀՀ՝____________________________ | ՀՎՀՀ՝____________________________ |
| ՀՀ՝______________________________ | ՀՀ՝______________________________ |
| _________________________________ | _________________________________ |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N __

**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

**«__» «___________» 2014թ.**

Պայմանագրի անվանումը՝ ________________________________:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» «___________» 2014թ.
Պայմանագրի համարը՝ **N____________________**
Գնորդն, ի դեմս տնօրեն՝ ________________յանի և Վաճառողն՝ ի դեմս տնօրեն՝ ______________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարումները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «__» «___________» 2014թ.-ից «__» «___________» 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները.

| **Գնման առարկայի անվանումը** | **Գնման առարկայի քանակական ցուցանիշները** | **Մատակարարումների կատարման ժամկետը** | **Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/** | **Վճարման ժամկետը /ըստ ժամանակացույցի/** |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | ________ | ---------- |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Հանձնեց | Ընդունեց |
|---|---|
| ________________________ | ________________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| ________________________ | ________________________ |
| (Ազգանուն, Անուն) | (Ազգանուն, Անուն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |